



Առաջնորդի Խօսք

ԾՈՒՇԱԾ ՆՈՐ ԱՐԵՎԱՅԻ



ԲԱՐՁՐ ԱՐքԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ՝
Գևատայի Հայոց Թեմին

Դարձեալ տօն է: Տօներու տօնը՝ ծնունդը Նոր Արքայի Բեթղեհեմ քաղաքին մէջ: Ծնունդ է դարձեալ, տօնը՝ մեր Փրկիչին ծննդեան: Անո՞ր՝ որ աշխարհ եկաւ մեր յաւիտեական փրկութեան համար:

Երկինքի հրեշտակները ցնծալով ցնծացին՝ տեսնելով մեծ եւ հրաշալի ծնունդը, եւ բարձրադաղակ գոչեցին. «աստուածածներու Աստուած եւ տէրերու Տէր, Դուն եւ Փրկիչը աշխարհի»: Յովիները տեսնելով խաղաղութեան իշխանը, արդարութեան արեգակը, հրեշտակներուն միացան ու ցնծութեամբ երգեցին. «Փառք Աստուածոյ բարձունքներու մէջ»: Մոքերը դիմումին աստղին փայլը եւ անոր Նշանին հետեւելով, Բեթղեհեմ եկան, զԱստուած փառաբանեցին, Տիրոջ երկրպագեցին եւ ամենն թանկագին նույները ընծայեցին:

Ս. Կոյսէն անապական ծնած Թագաւորը Յորդանանի մէջ մկրտուեցաւ Յովիաննես Սկրտիչի ծնուամբ եւ իրմով տիեզերքը մեղքերէն մաքրուեցաւ: Մէկ խօսքով՝ իրմով վերականգնուեցաւ անկեալ մարդը, եւ աշխարհը լուսաւորուեցաւ:

Հետեւաբար, Ս. Ծննդեան տօնը՝ Աստուածայայտնութեան տօն է: Տօնը՝ Աստուածոյ եւ մարդուն հանդիպման: Տօնը՝ Վերականգնման եւ Վերանորոգման:

Եկե՛ք նոյն եւ մէկ ժողովուրդի զաւակներ, ուխտենք վերականգնել ու անաղարտ պահել Աստուածային ճշմարիտ պատկերը մեր մէջ: Սուրբ Կոյսէն Ծնուածք հաւատքով ընդունինք մեր կեանքին մէջ, այսպէս՝ ինչպէս Սիմեոն ծեռունին ընդունեց:

Ամանորի եւ Ս. Աստուածայայտնութեան բարեբաստիկ տօներուն արթիւ ընդունեցէք մեր ջերմագին շնորհաւորութիւնները: Նոր Տարին գեղեցիկ օրինութեան, ինքնաճանաշման ու վերանորոգման նոր հանգրուան մը ըլլայ մեզմէ իրաքամչիւրին համար:

Թող Աստուածորդիին ծնունդը Ս. Կոյսէն, իրաքանչիւր հայու համար ոլլայ ճշմարտութեան եւ յաւերժութեան ճանապարհ:

Կը մաղթեմ ձեզի շնորհաբեր Ամասոր եւ Ս. Ծնունդ, աղօթելով որ Մանկացեալ Փրկիչը խաղաղութիւն պարգտէ աշխարհին եւ մարդկանց միշտ հաճութիւն, հիմսուած՝ արդարութեան եւ սիրոյ վրայ:



ՃՈՐԺԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՎ Ս. ԾՆՈՒՆԴ,

ՃԵզի Եւ մեզի մեծ աւետիսի՝
Քրիստոս ծնաւ Եւ յայտնեցաւ:

Ճիշտը Գիտնանք

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ ՅՈՒՆԻԿԱՐ 6-ԻՆ, ԹԷ ԴԵԿՏԵՄԲԵՐ 25-ԻՆ



Համաձայն հաւասարի աղքիւրներու՝ 2րդ դարու կէսէն յետոյ Աստուածայայտնութեան տօնը կը կատարուիր Յունուար 6ին: Մինչեւ 4րդ դար, Աստուածայայտնութեան տօնը բոլոր քրիստոնէաները վիասնաբար կը կատարէին: 4րդ դարէն ետք, Հռոմի Կաթոլիկ եկեղեցւոյ որոշումով, Յիսուսի Ծնունդը սկսան տօնակատարել Դեկտեմբեր 25ին, իսկ Մկրտութիւնը Յունուար 6ին:

Այս փոփոխութեան զիշաւոր պատճառը հետեւեալն էր.

Հերանուսական շրջանէն մասցած Արեւ աստուծոյ տօնակատարութիւնը, որ ամէն կողմ տարածուած էր եւ ամէնէն աւելի սիրուած ժողովրդական տօնը կը համարուիր, Հռոմի մէջ կը կատարուէր Դեկտեմբեր 21ին մինչեւ 31ը, իսկ հանդիսաւոր տօնակատարութիւնը կ՝ ըլլար Դեկտեմբեր 25ին: Դեկտեմբեր 25ը Միթրայի արեւի աստուծոյ ծննդեան օրը կը համարուէր:

451 թուականին, Քաղաքեղոնի ժողովի ընթացքին, վերջ տալու համար Արեւ աստուծոյ տօնակատարութեան, Հռոմի եկեղեցին Դեկտեմբեր 25ը որոշեց Յիսուսի Ծնունդեան օր որպէս ճշմարիտ եւ արդար Արեգակի տօն: Այս որոշումը ժամանակի ընթացքին գործադրուեցաւ միւս եկեղեցիներուն կողմէ:

Ուրիշ պատճառ մը ես կը յիշատակուի Ս. Ծննդեան թուականի փոփոխութեան համար.-

Պաղեստինի մէջ, տեղացիներու եւ ուխտաւորներու մասնակցութեամբ, Բեթղեհեմի մէջ, մթնշաղին կը տօնակատարուիր Ս. Ծնունդը: Նոյն օրը տեղի կ'ունենար նաեւ Մկրտութեան տօնախմբութիւնը Յորդանան գետին մէջ: Որովհետեւ ձմրան եղանակին Բեթղեհեմին մինչեւ Յորդանան գետ ճանապարհորդութիւնը այնքան ալ դիմրին չէր, ան ալ նպաստեց, որ Դեկտեմբեր 25ին կատարուի Ս. Ծննդեան տօնը եւ Յունուար 6ին՝ Մկրտութիւնը:

Միայն հայերը հաւատարիմ մասցին հնաւանդ սովորութեան եւ ցայսօր կը շարունակէն Յունուար 6ին տօնախմբել Աստուածայայտնութեան՝ Ծնունդեան եւ Մկրտութեան տօները:



ՀՈԳԵԽՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ




ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ


Քրիստոնէական աստվածաբանութիւնը հիմնուած է փրկութիւնը, որ Ան խաչին վրայ մեր մեղքերուն ո՞չ թէ Աստուծոյ մասին մարդկային պատկերացումներու, համար մաշացաւ, երրորդ օրը յարութիւն այլ Աստուծոյ կողմէ տրուած յայտնութեան վրայ: Եկեղեցւոյ առաջ 40 օր ետք երկինք՝ Հօր մօտ վարդապետները հիմնուելով Սուրբ Գիրքի վրայ եւ համսնելով համբարձաւ: Գիտենք նաև, որ այնուհետեւ բարձր աստվածանախութեան, կ'ուսուցանեն, որ զԱստուած պէտք է զաւանի որպէս Սուրբ երրորդութիւն՝ հաւատալով եւ հանգեցաւ առաջեալներուն մէջ, ապա բոլոր երկրպագելով Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգին:

Աստուածային երեք Անձերը միաւորուած են մէկ ընտոթեամբ: Այսոնք կը կոչեն միասնական, անրաժամկետ եւ համագոյ, այսինքն՝ Անոնք երեն ալ կատարեալ եւ ճշմարիտ Աստուած են: Սակայն, ո՞չ Որդիին եւ Սուրբ Հոգին անունով: Այդ թէ երեք Աստվածներու կը հաւատանք եւ կը խոստովանինք, այլ իսկ պատճառով խաչակնքելու ժամանակ երեքին՝ որպէս մէկ Աստուած:

Թէեւ մարդկային հաւակացողութենէն վեր է Ամենասուրբ երրորդութեան ուսուցմունքը, սակայն քրիստոնեաներս հաւատքով կ'ընկալենք զայն: Քանզի գիտենք, որ Հայրն առաքեց Որդիին, եւ Որդիին՝ Յիսուս Քրիստոսը, մարդանալով՝ իրագործեց մեր



«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

 ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐ ՀՈՒՐԴԻՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եօթը խորհուրդներէն մէկն է Մկրտութեան Խորհուրդը, ուղղակի մեր Տէր Յիսուս Քրիստոսի կողմէ հաստատուած: Կրօնական խմաստով այն խորհուրդն է, որ կը կատարուի ջուրով՝ սրբելու, մաքրելու համար մկրտուողին մեղքերը, որ կը կոչուի աղամական, առաջին կամ սկզբնական մեղքը: Մկրտութիւնը կը կոչուի նաև վերստին ծնունդ, որովհետեւ մկրտուողը կը սրբուի իր մեղքերէն եւ վերստին կը ծնի Աւազանէն:

Մկրտութեան առաջին բաժինը ապաշխարութեան բաժինն է. կնքահայրը եւ բոլոր ներկաները զղում կը յայտնեն իրենց գործած մեղքերուն համար՝ երախայի անունով: Երկրորդ մասը երախային զղումն է: Երրորդ մասը երախային մուտքն է Եկեղեցի եւ չորրորդ՝ բուն մկրտութեան արարողութիւնը, որ քահանային ձեռամբ կը կատարուի:

Մկրտութեան անրաժամ մասն է Դրոշմի Խորհուրդը. մկրտուելին անմիջապէս ետք անձը կը դրոշմուի Ս. Միուննով: Դրոշմը Սուրբ Հոգին ընդունելու խորհրդանիշ է եւ կատարումն ու լրումն է մկրտութեան: Դրոշմի առաջին մասը միուննով օծումն է երախային մարմնի անդամներուն եւ զգայարաններուն: Երկրորդ մասը ընծայումն է. Ս. Սեղանին երեք անգամ երկրպագելով: Իսկ երրորդ մասը Քրիստոսի Մարմնի եւ Արեան ճաշակումն է (Ս. Հաղորդութիւն):

Այս բոլորով է, որ երախան կը դառնայ կատարեալ քրիստոնեայ եւ լիիրաւ անդամ Ս. Եկեղեցւոյ: Ան՝ որ մկրտութեան խորհուրդ կը ստանայ, իր մէջ չնորհքը կ'ածի, կը մեծնայ, կ'իրագործուի եւ կը տարածուի: Երախան կը ստանայ չնորհքը: անիկա պէտք է մշակել սակայն, պէտք է ամեցնել: Այստեղ է կնքահօր եւ ծնողներուն դերը:

Իրաքանչիւր երախայ, որ կը մկրտուի Հայ Եկեղեցւոյ միուննարոյ աւագանին մէջ, ինքնարերար որդեգիր կը դառնայ «Հայր» Աստուծոյ եւ Հարազատ զաւակը՝ «Մայր» Եկեղեցւոյ: Երեսն հարց կը տրուի՝ աւելի միշտ չէ՞՝ որ փոքրիկները մեծնան, քիչ թէ շատ խելահաս դառնան եւ իրենց զիտակցութեամբ մկրտուին: Բայց պէտք է գիտակցիր, որ կրօնական ճշմարտութիւնն ու խորհրդները համար ո՞րն է խելահասութեան տարիքը: Ծնողները կը սպասե՞ն, որ իրենց փոքրիկները խելահաս դառնան, եւ յետոյ միայն կ'երթան դպրոց կամ կ'որոշն իրենց ազգութիւնը, բնականաբար ո՞չ:

Հետեւաբար, Հայ ծնողները յարգելով իրենց մայրենի Եկեղեցւոյ սկզբունքներն ու աւանդութիւնները, մկրտեն եւ դրոշմել տան իրենց փոքրիկները անոնց ծնունդին ութ օր ետք, առաւելագորնը՝ մինչեւ մէկ տարի, եթէ տրեւէ արգելող պատճառ չկայ: Փօքրիկներուն ամիսներով և նոյնմասկ տարիներով անկնունք պահելը ամենալի չէ, եւ այն ծնողները՝ որոնք անհոգ եւ անտարբեր կը մնան եւ ժամանակին մկրտել չեն տար, ծանրապէս պատասխանատու են Աստուծոյ եւ իրենց զաւակներուն առջեն: Տակաւին ներելի չէ, որ մայր Եկեղեցւոյ զաւակները յանձնեն օտար Եկեղեցիներու եւ թոյլ տան, որ օտար Եկեղեցւոյ պաշտօնեաներ դարձեալ մկրտեն մեր զաւակները: Ինչպէս Հաւատամքի մէջ կ'ըսուի՝ մէկ է Յիսուս Քրիստոսի Եկեղեցին, այսպէս ալ մէկ է քրիստոնէական մկրտութիւնը, այսինքն՝ ուեւէ անձ մի՛այն մէկ

անզամ է որ կը մկրտուի քրիստոնեայ դառնալու համար: Զգոյշ, սիրելի՝ ծնողներ, զուք մի՛ յանձնուիք եւ ձեր զաւակները մայր Եկեղեցւոյ զաւակները, մի՛ յանձնէք օտարին: Զգոյշ, օտարի կաթով մի՛ մնուցէք զանոնք: Զեր զաւակները միայն ու միայն Հարազատ մօր կաթին կարօտ են, իրենց Հարազատ մօր՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Զգոյշ: Այո՛, զգուշացէ՛ք օտարին կաթէն: Զգուշացէ՛ք օտարացնող անուններէն. մեր զաւակներուն կը վայեկն հայու՝ արժանի անուններ: Զգոյշ օտարացնող մոլուցներէն: Դարձէ՛ք Մայր Եկեղեցւոյ գիրկը, մօտեցէ՛ք եւ տեսէ՛ք ինչքան քաղցր է ...:

Քաղաքան Արք. Զարման

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Տարիներ առաջ, Կաղանդը կը սպասէի, մայր ինծի հարցուց թէ, ի՞նչ նուեր կը փափաքիմ ունենալ. Մօրս պատասխանեցի. «Մրտիս փափաքն է մանուկներ բերել, որոնք առանձին են եւ խնամքի պակասը ունին: Այդ մանուկները խնամելը լաւագոյն նուերն է ինծի համար»:

Մայրս քաջալերեց զիս, եւ ես՝ առիթն ու արտօնութիւնը ունեցայ երկու մանուկներ բերելու մեր տունը ինսամատար հաստատութենէ մը: Երկու շարթուան ընթացքին երկու մանուկները շատ ուրախ ժամանակ անցուցին, ամէն օր ծրագիրներ ունենիք: Երեխաները երշանիկ են:

Օր մը մայրս հարցուց երեխային, թէ Կաղանդին ընդհանրապէս ի՞նչ կ'ընէին իրենց տան մէջ: Երեխան պատասխանեց. «Կաղանդը այդ օրն է, որ մենք առիթը կ'ունենանք նարինց ու խնձոր ուտելու, նաեւ պտուղներու կողին մայրս մեզի յատուկ պառը մը կը շինէր, զոր շատ կը սիրէինք»: Մայրս մեծ հաճոյրով պատասխանեց. «Ինծի ըսէ այդ ապուրին բաղադրութիւնը, որպէսիք ես ալ պատրաստեմ ձեզի համար»:

Մայրս երբ կը պատրաստէր ապուրը, մեծ երեխան, որ պատանէկութեան տարիքին մօր էր, մեծ ուրախութեամբ մօրս կ'օգնէր, սակայն փոքր երեխան անհետացած էր տան մէջ: Ակսայ մտահոգուիլ:

Կը փնտուի զինք, բայց չէի գտներ: Յանկարծ լալազին ձայն մը լսեցի եւ տեսայ, որ պատիկ եղբայրը ճաշարանին սեղանին տակ նստած կու լար: Երբ հարցուցի, թէ ինչո՞ւ կու լար, չուզեց պատասխանել եւ կծկուած վիճակով երեխս անզամ չէր ուզեր նայիլ: Փորձեցի դուրս բերել զինք անուշութեամբ: Անենակ տարի զինք եւ սկսայ հարցումներ ընել, թէ ինչո՞ւ այդքան յուզուած էր, ան վերջապէս ըսաւ. «Այս ապուրը, զոր կը պատրաստէր, մօրս յիշեցուց... զիտեմ, թէ անկարելի է, որ մեր հին օրերը վերստին վերադարձնան»: Որպէսի մոռցներ իրեն այդ բոլորը, զինք մը բայց եւ սկսայ պատմութիւն պատմել, թէ ինչպէս Աստուած Պապան մեր բոլորին հոգատարն է, յիշելով աւետարանական խօսքը, որ կ'ըսէ. «Ես ձեզի երբեք որք պիտի չձգեմ» (Յովի.14.18):

Վերջաւորութեան բոլորս միասին ձեռք ձեռքի տուած աղօթեցինք եւ շատ հաճելի Կաղանդ մը անցուցինք:

Երբեմս մէկ անոյշ խօսքը եւ հոգատար սիրտը, տարիներու խոր վերք մը կրնայ գոցել ու բուժել... Այս մէկը ընելու կարողութիւնը բոլորս ալ ունինք...:

Համասն



Archbishop Papken's Message

Once again, we celebrate. The celebration of all celebrations, the birth of the new King in the city of Bethlehem. Christmas is around the corner once more, the celebration of our Saviour's birth, the one who came to the world for our eternal salvation.

The angels of heaven leaped with joy, in seeing the miraculous and magnificent birth, and exclaimed "God of Gods and Lord of lords, you are the saviour of the world." The shepherds having witnessed the prince of peace and the sun of righteousness, joined the angels in singing with joy "Glory to God in the highest." The Three Wise Men noticed the radiance of the star and following its sign came to Bethlehem, glorified God, worshiped the Lord, and offered their most valuable gifts.

The King, born of a Virgin was baptized in the Jordan River by John the Forerunner, and through him the universe was cleansed of all sins. Put simply, through him fallen humanity was restored and the world enlightened.

Thus, the celebration of Christmas is in fact a celebration of God's revelation (Epiphany). The celebration of the encounter of God and man. The celebration of our restoration and renewal.

Come, therefore children of the same people, let us pledge to renew and keep absolute the authentic image of God inside of us. Let us accept with faith into our lives the one born of the Holy Virgin, similar to Simeon the Elder.

During the festive times of New Year and Epiphany, do accept our warmest well wishes and congratulations. May the New Year be a new milestone of blessings, self-consciousness and renewal for each one of us.

May the birth of God's Son from the Holy Virgin become the pathway of truth and eternity for each Armenian.

I bid you all a blessed New Year and Christmas, prayerful that the child Saviour grant peace on earth and goodwill toward men, based on justice and love.

Merry Christmas and Happy New Year



WHAT DO YOU WANT

(1 Kings 3:5)

What if God asked you this question? What would your request be?

In the book of Kings, we come across a very young king, Solomon, famous for his extraordinary wisdom. He inherited his father's throne at the age of only 18. The era of his father and predecessor King David was eventful, mildly put. David had to face enemies, both foreign and domestic, including his son Absalom, who rebelled against him. When one reads the whole story, it is hard to imagine the burden of responsibility that was put on Solomon's shoulders, because of the complexity of the socio-political circumstances that he had to deal with.

God appeared to Solomon in a dream and asked him: "What do you want? Ask, and I will give it to you." (1 Kings 3:5). Solomon's answer pleased God, since he did not ask for a strong army, nor wealth, nor the annihilation of his enemies. What he asked for was wisdom! God's response was: "Because you have asked for wisdom in governing my people with justice [...], I will give you a wise and understanding heart such as no one else has had or ever will have! And I will also give you what you did not ask for – riches and fame!" (1 Kings 3:11-12). Wow! What God was basically saying is that, since Solomon asked for wisdom, he could be entrusted with fame and fortune as well!

How many times have we heard the scandalous stories of the rich and the famous, the powerful and the prestigious, who, at one point thought they had it all, but what they really lacked was character and wisdom, so they fell and hit rock bottom. There's a saying, that goes something like this: do not ask God to raise you to heights, where your character is not strong enough to sustain you.

WISDOM! It begins with God's reverence (Proverbs 1:7), acknowledging his existence and living gratefully, humbly, and responsibly in God's presence, with the realisation that life is not about us, humans, but rather everything is from God, exists by God and for God's glory (see: Romans 11:36). If so, we need more than human experience and expertise; we need divine wisdom in order to understand his plan for our own lives.

Father Keghart Keklikian

Message de Prelat

Encore une fois, nous célébrons. La célébration ultime, la naissance du nouveau Roi, dans la ville de Bethléem. Noël est tout près, la célébration de la naissance de notre Sauveur, celui qui est venu au monde pour notre salut éternel.

Les anges célestes ont réjoui, en observant la naissance miraculeuse et magnifique, et se sont exclamés: «Dieu des dieux et Seigneur des seigneurs, vous êtes le sauveur du monde.» Les bergers en témoignant le prince de la paix et le soleil de la justice, se sont joints en chantant avec joie: «Gloire à dieu au plus haut des cieux.» Les rois mages ont remarqué la splendeur de l'étoile et en suivant son signe sont arrivés à Bethléem, ont glorifié le Seigneur, et ont offert les cadeaux les plus précieux.

Le Roi, né de la Vierge, a été baptisé dans le Jourdain par Jean le Baptiste, et à travers lui l'univers a été purifié de tous péchés.

Ainsi, la célébration de Noël est en conséquence une célébration de la révélation divine (Épiphanie). La célébration du renouveau entre Dieu et homme. La célébration de notre restauration et notre renouvellement.

Venez donc, enfants du même peuple, engageons-nous à renouveler et garder pure l'image véritable en nous de Dieu. Acceptons avec foi dans notre vie celui qui est né de la Sainte Vierge, pareillement à Siméon.

Durant ces fêtes propices du Nouvel An et de l'Épiphanie, veuillez accepter nos souhaits et félicitations les plus chaleureux. Que le Nouvel An soit une nouvelle étape de bénédictions, de conscience de soi et de renouvellement pour chacun et chacune de nous.

Que la naissance du Fils de Dieu de la Sainte Vierge, devient le sentier de la vérité et de l'éternité pour chaque Arménien.

Je vous souhaite tout un Nouvel An et Noël bénit, priant que l'enfant Sauveur offre paix sur la terre et bienveillance parmi les hommes, fondé sur la justice et l'amour.

Bonne Année et Joyeux Noël



Dialogue with the youth

Christ is with us to liberate each of us from the slavery of death. According to the bible, death is not only the cessation of physical existence; it is also the absence of God and the dominion of sin. God so loves the world and humanity that He sent His only begotten Son to liberate us from the bandage of sin, as states the Evangelist (John 3:16).

The Christ is God's offer of "Abundant" life to humanity. We are invaded in our daily life with the kinds of trends and tendencies, with the sort of ways of life and patterns of thought that make us the captives of fear and insecurity. Christ conquered the death by his cross and gave us new life.

We are living in a world full of uncertainties and anxieties. Let us remind ourselves that the child of Bethlehem is with us as we carry on our combat of faith and hope.

Let us not forget the words of ST. Paul : "We are hard pressed on every side, but not crushed; perplexed, but not in despair, persecuted, but not abandoned; struck down, but not destroyed" (2 Corinthians 4:9), because Christ is and will remain our liberator.

Aram I Catholicos of Cilicia
Antelias - Lebanon



Ի՞նչ է Լուսաւորիչի կանթեղը



Յայ ժողովուրդը գեղեցիկ աւանդազրոյցներ ունի՝ նույնական պատմական դեմքերու, որոնց ընդմշնդին կ'արտայայտ իր երախտագիտութիւնը, սերն ու ակնածանքը անոնց հանդեա:

Ինչպէս Ս. Մեսրոպ Մաշտոցի, նոյնպէս ալ մեր երկիրը քրիստոնեութեան լոյսով լուսաւորած հայրապետին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի անունին հետ կապուած դրուագները շատ են մեր բանահիւսւթեան մէջ: Անոնցմ մէկը կ'առնջուի Արագած լեռան անմիւթեան հրաշքին՝ «Լուսաւորիչի կանթեղ»-ին:

Իսկ ի՞նչ է «Լուսաւորիչի կանթեղը»: Վւանդութիւնը կը պատմէ, որ մինչադին, երբ վերջալոյսի ցոլերը կը սկսին մարիլ, Արագածի վրա, անոր չորս գագաթներուն միշել, անպարան, կանթեղի նման կը կախուի երկար լուսեղը ցոլը մը՝ «Լուսաւորիչի կանթեղը»: Կանթեղը մշտավառ է եւ ձերի փոխարէն լեցուն է Լուսաւորիչի արտասուլով: Ժողովուրդը կը հրաշք այս ճիզվութեան լոյսով, այնպէս ալ իր աղօթքներուն արգասիքը հանդիսացնող կանթեղը, իր ճառագայթող լոյսով չափ խորհրդանշի խաւարը կը հեռացնէ մեր երկու երկնակամարտն ու Աստուածային լուսեղն օգործեամբ կ'առաջնորդ բոլոր անոնք, որոնք իրենց աղօթքներուն ընդմշնդին զվարուած կը փառաբանեն:

«Լուսաւորիչի կանթեղ»-ին օգործեան հաւատքը այսքան արմատացած է մեր ժողովուրդին մէջ, որ հայ ժողովուրդի մեծ բանաստեղծները՝ Յ. Թումանեանն ու Վահան Թերեւեանը, բանաստեղծութիւններ գրած են այս մասին:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ ծաղկեցնել հայերէնը

Գաղտնիք չէ, որ ժողովուրդ մը բնաշնչելու եւ ծովելու ամենն ազդու միջոցներն մէկը՝ անոր զաւակները, մայրէնի լեզու գործածելու իրաւութեն զրկելն է: Յայ ժողովուրդը պատմութեան ընթացքին յաճախ ենթարկուած են մասն վերաբերմւնքի: Առնուազն վերջին հարիւրամեակին, Օսմանեան կայսրութենեն սկսեալ, մինչեւ Յարական կայսրութիւն եւ Խորհրդային Միութիւն, փորձած են մեզմ իլել մեր լեզուն, այդպիսով նաև մայրէնին մեզի փոխանցուող ազգային արժեքներն եւ մեր ինքնութեան հարուստ շտեմարանն անջատել: Բարեբախտաբար, մեր վրայ բանեցուած այս ճիզվութեան ցարդ ապարդին անցած են, քանի որ մեր Ոսկեդարն սկսեալ մինչեւ օրս միշտ ալ եղած են հայերէնը ծաղկեցնողները: Այսօր սակայն, ոչ միայն մեր լեզուն, այլ նաեւ շատ մը ժողովուրդներու լեզուներն ու մշակոյթները վտանգուած են կայսերապաշտութեան նոր դրսեւորութենքուն առջեւ: Կը տեսնենք, թէ ինչպէս համաշխարհայնացումը, տիրապետող լեզուի մը՝ անգլերէնին անսակարելի գերակայութեամբ, կը մտնէ մեր տուները, դպրոցները, ակումբները, նոր ծողո ու ծաղկող մանուկներու առօրեային մէջ ու կը գերէ զանոնք, կը փոխէ անոնց լեզուամտածողութիւնն ու կը յափշտակէ մայրէնիով աշխահին բացուելու անոնց իրաւունքը:

Ճետեւաբար, ի՞նչ պէտք է ընել, որպէս ծնողը, դաստիարակ կամ դեկապար, եթէ կ'ուզենք որպէս ազգ գոյատեւէլ եւ որպէս ժառանգործ Մեսրոպի ոստում կատարել դեպի ապագայ: «Պատասխանը՝ պարզ է: Պարզապէս պէտք է սիրել հայերէնը: Սիրել եւ պահպանել զայն: Պահպանել՝ ապրեցնել՝ գործածելով, գործածել՝ ծաղկեցնելով եւ ծաղկեցնել՝ գորգուրալով, անսակար սիրով, միասնաբար, ողակուած ռազմավարութեամբ մը ու ամենակարեւորը՝ անընկրկելի հաւատքով:

ԱՐԱՐԱՏ ՍՈՒՐԲ ԳԻՐՁԻ ԸՆԹԵՐՁՈՒՄԵՆ ԱՌԱՋ

Տէր Յիսուս Քրիստոս, բաց իմ սրտիս աչքերն ու ականջները, որպէսզի լսեմ քու կամքը: Կը հաւատամ, Տէր, որ կը լուսաւորեն իմ սիրտս, որովհետեւ Դուն ողորմած Աստուած ես:

Եւ թեզ փառք յախտեան: **ԱՌԵՒ:**



Մանկապատասեեան

Մրցութիւն

Վեց անգամէն աւելի կրկնոած տառերը մաքրելով գտնել ներքեւի հարցի պատասխանը

ԱԼ ՞ Ր
ՇՆ ԱԼ
ՅԻ ՍՈԼՍ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Յ | Ի | Ր | Ֆ | Ս | Ո | Ի | Պ | Ր | Ս |
| Կ | Ի | Գ | Հ | Բ | Ր | Դ | Ա | Շ | Բ |
| Ա | Դ | Լ | Դ | Ի | Ծ | Ֆ | Ն | Բ | Պ |
| Բ | Ո | Կ | Ի | Ն | Գ | Դ | Պ | Ֆ | Ը |
| Գ | Պ | Տ | Ե | Կ | Ղ | Գ | Ի | Կ | Ֆ |
| Ո | Դ | Դ | Ի | Բ | Ն | Ե | Պ | Ց | Դ |
| Ա | Պ | Ի | Կ | Բ | Ֆ | Ե | Բ | Դ | Ղ |
| Գ | Ե | Դ | Հ | Ե | Գ | Բ | Պ | Ս | Պ |
| Կ | Գ | Զ | Ֆ | Ա | Ղ | Պ | Ա | Կ | Ֆ |
| Ջ | Ֆ | Պ | Ո | Կ | Ի | Ֆ | Բ | Ս | Պ |

